ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԴԱԼՅԱՆ ՄԻԽԱԻԼ ՍՈՒՐԵՆԻ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԴԻՑԱՐԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿԸ (ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ, ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Է. 00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

БАДАЛЯН МИХАИЛ СУРЕНОВИЧ

ВЕРХОВНАЯ ТРИАДА УРАРТСКОГО ПАНТЕОНА (КУЛЬТ, СИМВОЛЫ, ИКОНОГРАФИЯ) НА ОСНОВЕ АРХЕОЛОГИЧЕСКИХ ДАННЫХ

АВТОРЕФЕРАТ
диссертация на соискание учёной
степени кандидата исторических наук
по специальности 07.00.03 “Археология”

ЕРЕВАН-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ. գ.. դ., պրոֆ. Ա. Ս. Փիլիպոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ.. դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյան
պ. գ. թ., Ե. Հ. Գրեկյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. նոյեմբերի 24-ին ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на заседании учёного совета Института археологии и этнографии НАН РА

Научный руководитель: д. и. н., проф. Пилипосян А. С.
Официальные оппоненты: д. и. н., проф. Аветисян А. Г.
к. и. н. Грекян Е. А.

Ведущая организация: Институт Востоковедения НАН РА

Защита состоится 24 ноября 2015 г. в. 14^{00} часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).

Автореферат разослан 23 октября 2015 г.

Учёный секретарь специализированного совета,
Кандидат исторических наук Мелконян У. А.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վանի թագավորության (Ուրարտուի) գոյության ամբողջ ընթացքում կրոնը կարևորագույն դեր է ունեցել և կազմել պետության արքայական գաղափարախոսության առանցքներից մեկը: Այս համատեքստում իր ուրույն տեղն ուներ Ուրարտուի դիցարանը, որը, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության (Ք. ա. 825-810թթ.) տարիներին: «**Ավելի լավ հասկանալու համար թագավորների գործունեությունը և Ուրարտուի մշակույթի բնույթը՝ պետք է նախապես ծանոթանալ երկրի պանթեոնի հետ**». նման դիպուկ բնորոշմամբ է հայ անվանի գիտնական Ն. Ադոնցը որակել դիցարանի դերը ուրարտական տերության մեջ[1]:

<u>Ուսումնասիրության արդիականությունը:</u> Կրոնը կազմում էր Վանի թագավորության արքայական գաղափարախոսության միջուկը: Այս առումով, վերջին տարիներին, այն համարվում է ուրարտագիտության ամենաարդիական և հետազոտվող ոլորտներից մեկը: Ուրարտական պետության կրոնի, դիցարանի և նրա գերագույն եռյակը ներկայացնող Խալդի, Թեյշեբա և Շիվինի աստվածների վերաբերյալ ուսումնասիրությունները և աճող հետաքրքրությունը նկատելի են ոչ միայն ուրարտագետների, այլև Հին Մերձավոր Արևելքի նյութական և հոգևոր մշակույթով հետաքրքրված մասնագետների շրջանում (Ն. Չևիկ, Ս. Հոլլովեյ, Գ. Յակուբյակ, Դ. Շվեմեր, Թ. Թանյերի-Էրդեմիր, Ն. Գիլլման, Ի. Թաշ և այլն): Պետք է նշել նաև, որ ուրարտական մի շարք հուշարձանների, և հատկապես Այանիսի, Վերին Անձավի, Էրեբունու և Ալթըն-թեփեի պեղումների վերջին տարիներին գրանցած արդյունքերն ավելի են մեծացնում ուշադրությունը խնդրո առարկա թեմայի շուրջ:

<u>Հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները:</u> Չնայած թեմայի ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված արդյունքներին, դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք վիճարկելի են դարձնում նրա մի շարք մեկնաբանություններ: Այսպես. 1) թեման իր կոնկրետ ուղղություններով (պաշտամունք, պատկերագրություն, խորհրդանշաններ) գրեթե չի քննարկվել հինմերձավորարևելյան աշխարհաքաղաքական և կրոնածիսական զարգացումների համատեքստում, 2) պատասխան չի տրվել այն հարցին՝ արդյո՞ք Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակն ունեցել է նախնական ակունքներ, թե այն ստեղծվել է արհեստականորեն՝ քաղաքական կամքի թելադրանքով, 3) գրեթե բոլոր աշխատությունները քննարկված չեն ո՛չ ժամանակագրական սկզբունքի, և ո՛չ էլ ուրարտական տերությունում ընթացող պատմամշակութային զարգացումների համատեքստում, 4) վերջին տարիներին գտնված տեքստերը, լուրջ հարցականի տակ են դնում Վանի թագավորության դիցարանի

---

[1]Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն,1972, էջ, 224:

ուսումնասիրության համար մասնագիտական գրականության մեջ հիմնաքարային դարձած Միհրի Դռան արձանագրության կապակցությամբ առաջ քաշված մի շարք եզրահանգումներ: Այսպես օրինակ՝ չկա որևէ ուղղակի սկզբնաղբյուր, որտեղ Միհրի Դռան արձանագրության առաջին երեք արական և իգական աստվածություններին կարելի է անվանել զույգ երրորդություն: Այանիսից գտնված արձանագրության մեջ հստակեցվում է, որ ուրարտական դիցարանում չկար Խուբա աստվածուհի և վերջինիս անունը ընթերցվել է Բաբա ձևով: Չկա որևէ ուղղակի սկզբնաղբյուր, համաձայն որի Խալդիին, Թեյշեբային և Շիվինիին կարելի է նույնացնել նույն Միհրի Դռան արձանագրության տեքստում հիշատակված լեռների, դաշտերի և ծովերի աստվածների հետ և այլն, 5) ի տարբերության հինմերձավորարևելյան մի շարք «պատկերագրային» սկզբնաղբյուրների, ուրարտականում մեզ հայտնի չէ որևէ ուղղակի սկզբնաղբյուր, որն առնչվեր այս կամ այն աստվածությանը:

Այս առումով մեր ուսումնասիրության նպատակն է. 1) փորձել թեման հնարավորինս քննարկել հինմերձավորարևելյան կրոնաքաղաքական գործընթացների ու զարգացումների համատեքստում, 2) պահպանել ժամանակագրության սկզբունքը՝ այն դիտարկելով ուրարտական պետության մեջ ընթացող պատմամշակութային զարգացումների համատեքստում, 3) հիմնվելով հնագիտական սկզբնաղբյուրների վրա և քննարկելով ու ի մի բերելով թեմային վերաբերող գրականությունը՝ փորձել վեր հանել ուրարտական տերության գերագույն եռյակի, ինչպես նաև եռյակը ներկայացնող յուրաքանչյուր աստվածության պաշտամունքի ծագումը, զարգացումը, գործառույթները, նրանց հետ կապված ծիսապաշտամունքային կառույցներն ու արարողությունները, 3) ըստ ժամանակագրական հաջորդականության, մանրամասն քննարկելով ուրարտական պատկերագրությունը, կազմել վիճակագրական աղյուսակներ, առանձնացնել աստվածությունների կերպարները և դրանց հիման վրա անել որոշակի եզրակացություններ, 4) հանձինս Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի փորձել ցույց տալ ուրարտական կրոնի ազդեցությունը հետուրարտական ժամանակահատվածի կրոնական մտածողության վրա:

<u>Հետազոտության գիտական նորույթը:</u> Ի մի բերելով սույն թեմային վերաբերող ուսումնասիրությունները՝ ատենախոսության մեջ վերանայվում, ինչպես նաև առաջ են քաշվում բազմաթիվ նոր հարցադրումներ և տեսակետներ, որոնք վերաբերում են թե՛ Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակին, և թե՛ նրա յուրաքանչյուր ներկայացուցչի պաշտամունքին, գործառույթներին, ծիսապաշտամունքային կառույցներին: Այս առումով, պետք է նշել, որ փորձ է արվել վերականգնել Խալդիի հետ առնչվող մի շարք ծեսեր («Սրբազան ամուսնության», առյուծ և ցուլ սպանելու ծեսեր և այլն), ինչպես նաև՝ ցույց տալ վերջինիս պաշտամունքի հետ առնչվող ծիսապաշտամունքային կառույցների փոխհարաբերակցությունը: Առաջին անգամ առաջ է քաշվում Խալդիի պաշտամունքային տարածույթների և դրանց առնչվող կերպարների տեսակետը:

Բոլորովին նոր մոտեցում է ցուցաբերվում Վանի թագավորության աստվածությունների պատկերագրությանը և նրանց խորհրդանշաններին: Փորձ է արվել կազմել ուրարտական աստվածությունների պատկերագրության զարգացումը, տիպերը: Առանձնացնելով դրանք՝ կազմվել են համապատասխան աղյուսակներ, որոնց հիման վրա նորովի մեկնաբանություններ են արվել թեմայի վերաբերյալ:

<u>Աշխատանքի կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից (քարտեզներ և աղյուսակներ, նկարներ՝ համապատասխան ցանկերով):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանությունը և ժամանակագրական սահմանները, ինչպես նաև՝ սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

ԳԼՈՒԽ Ի: ԽԱԼԴԻԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Խալդիի պաշտամունքի պատմությունը: Հիմնվելով ժամանակագրության սկզբունքի վրա՝ անդրադարձ է կատարվում Խալդիի պաշտամունքի պատմությանն ու դրա զարգացմանը: Քննարկվում են Խալդիի պաշտամունքի հնարավոր նախնական տարածքի խնդիրները: Այս առումով կարևոր սկզբնաղբյուր են Խալդի անունը պարունակող միջինասորեստանյան և նորասորեստանյան դիցակիր անձնանունները: Դրանց կրողների գործունեության տեղանքի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու երկու գոտի՝ Հյուսիսային Միջագետք և Բալիխ գետի ավազան: Հետաքրքիր է Խալդիի պաշտամունքի ծագմանը վերաբերող Ա. Պետրոսյանի կողմից առաջ քաշված «հայասական» վարկածը: Այն Հայասայի տարածքը Վանա լճի մոտակայքում տեղադրելու վերջին տեսակետներից հետո կարող է դառնալ բավական հեռանկարային: Այս առումով չպետք է մոռանալ Մուծածիրի և նրան հարակից տարածքների մասին, որոնք մի շարք հետազոտողների կարծիքով եղել են Խալդիի պաշտամունքի ծագման նախնական շրջանը:

Ըստ երևույթին, Ուրարտուի դիցարանի գերագույն աստծո պաշտամունքն Ուրարտուում ներդրվել է Իշպուինի արքայի կողմից: Վերին Անձավից գտնված հինգ օղակներից բաղկացած բրոնզե շղթայի ասսուրերեն արձանագրության մեջ իրեն «Խալդիի ստվեր» կոչելու հանգամանքը վկայում է այն մասին, որ Իշպուինին իրեն համարում էր այդ աստծո երկրային մարմնավորումը: Խալդիի պաշտամունքը դառնում է պետության արքայական գաղափարախոսության կարևոր առանցքներից մեկը:

Արդեն Իշպուինիի և իր որդի Մենուայի համատեղ գահակալության տարիներին մատնանշվում են Խալդիի պաշտամունքային տարբեր կերպարներ և «տարածույթներ». 1) Մուծածիր և հարակից շրջաններ, որտեղ Խալդին հանդես էր գալիս որպես արքայի իշխանության օրինականության երաշխավոր, 2) Վանա լճից արևելք և հյուսիս-արևելք ընկած գոտի, որտեղ Խալդին տեղի բնակչության պատկերացումներում պետք է ընկալվեր որպես արև, փրկիչ և ջերմության աղբյուր՝ իրեն սինկրետացնելով տեղի արևի աստծո մի շարք կարևոր գործառույթներ և հանդիսանար պետության բարեկեցության երաշխավոր, 3) նվաճվելիք տարածքներ, որտեղ Խալդին, նույնանալով արքայի հետ, հանդես էր գալիս որպես ռազմիկ և իր ամենահաղթ նիզակով ապահովում ուրարտական զորքի նվաճումները՝ օրինականություն հաղորդելով դրանց: Խալդիի պաշտամունքի ամրապնդման և հանրահռչակման գործընթացը վճռական փուլ է մտնում Մենուայի կառավարման տարիներին: Այն նշանավորվում է ուրարտական գերագույն աստծուն ձոնված բազմաթիվ pulusi կոթողներով: Մենուային հաջորդած Արգիշթի I-ի և Սարդուրի II-ի կողմից իրականացված նվաճողական քաղաքականությունը ենթադրել է տալիս «ռազմիկ-Խալդիի» կերպարի հզորացման մասին: Ցավոք, ասորեստանյան բանակից, իշխանության երկրորդ շրջանում (Ք.ա. 743-735 թթ.), Սարդուրի II-ի կրած ծանր պարտությունները որոշակիորեն խարխլում են «ռազմիկ-Խալդիի» կերպարը: Ուրարտուի հովանավոր աստծո միաբևեռ պաշտամունքը փոխվում է Ռուսա I-ի օրոք, ինչի մասին վկայում է Շեբիթու և Թեյշեբա աստվածների պաշտամունքին վերջինիս կողմից մեծ տեղ տալու հանգամանքը:

Մուծածիրի Խալդիի տաճարը Սարգոն II-ի կողմից գրավվելու և այստեղից Խալդիին «գերի տանելուց» հետո, Ուրարտուի գերագույն աստծո պաշտամունքի հիմքերը որոշակիորեն խարխլվում են: Ըստ երևույթին, Խալդիի նոր պաշտամունքային կենտրոն է դառնում Ռուսախինիլի Քիլբանիկային (Թոփրաք կալե): Թերևս Ռուսա I-ին հաջորդած բոլոր մյուս միապետների օրոք, ընդհուպ մինչև ուրարտական պետության անկումը, Խալդին շարունակում էր հանդիսանալ տերության գերագույն աստված: Այսուհանդերձ, Վանի թագավորության թուլացումը, բնականաբար, իր արտալացոլումը պիտի ունենար նաև Խալդիի կերպարի վրա:

Խալդիի կանայք: Ուարուբանի և Բագբարթու (Բագմաշթու): Մասնագիտական գրականության մեջ ընդունված է որպես Խալդիի կին համարել Ուարուբանիին, ով Ուրարտուի գերագույն աստծո հետ միասին հիշատակվում է մի շարք սեպագիր տեքստերում: Ըստ մի շարք հետազոտողների՝ Ուարուբանիին է նույնացվում Մուծածիրի տաճարում որպես Խալդիի կին հիշատակվող Բագբարթուն: Սակայն նման պնդումների համար ուղղակի սկզբնաղբյուրները բացակայում են: Մենք հակված ենք կարծելու, որ Ուարուբանին և Բագբարթուն եղել են տարբեր աստվածուհիներ: Ուրարտուին ժամանակակից Ասորեստանում գերագույն աստված Աշշուրի կին էին համարվում Նինվեի, Աշշուրի և Արբելայի

Իշթարները: Վերջիններս, չնայած իրենց անվան նմանությանը, ունեին տարբեր գործառույթներ: Հնարավոր է, որ Վանի թագավորությունում ևս գործել է նման ինստիտուտ: Այս ենթագլխում քննարկվում են Օձասարի արձանագրությունում որպես Պուլուադիի Խալդիի կին հիշատակված աստվածուհու հետ կապված որոշ հարցեր: Միանգամայն չբացառելով վերջինիս՝ Ուարուբանիի հետ նույնանալու հանգամանքը, մենք հակված ենք կարծելու, որ տեղում Խալդիի պաշտամունքը ամրապնդելու նպատակով վերջինիս հետ է «ամուսնացվել» տեղի գերագույն աստվածուհին:

Խալդիին վերաբերող ծիսապաշտամունքային վայրերն ու կառույցները: Ուրարտուի գերագույն աստծուն ձոնված են եղել բացօթյա և ճարտարապետական բնույթի ծիսապաշտամունքային համալիրներ: Բացօթյա համալիրներից հատկապես ուշագրավ են սեպագիր արձանագրություններով ժայռափոր խորշերը, որոնցից առանձնանում են Աշոտակերտն ու Միհերի Դուռը: Դրանք կոչվել են Խալդիի դարպասներ: Ունենալով հարթակ, կենդանիների զոհաբերման համար ակոսներ, Աշոտակերտի ու Միհերի Դռան համալիրներում, ըստ երևույթին, տեղի են ունեցել սեզոնային բնույթի ծիսապաշտամունքային արարողություններ, որոնք նախատեսված են եղել ոչ միայն ընտրյալ խավի, այլև հասարակության լայն զանգվածների համար: Վերը նշված երկու ժայռափոր խորշերի հիմնումը մեծապես նպաստել է Վանա լճի արևելյան ավազանում Խալդիի պաշտամունքի տարածմանն ու հանրայնացմանը: Որպես բացօթյա ծիսապաշտամունքային համալիրի մի մաս ուշագրավ են Խալդիին ձոնված pulusi կոթողները: Դրանց կերտումը հատկապես լայն թափ է ստանում Մենուա արքայի կառավարման տարիներին: Խալդիին ձոնված ճարտարապետական բնույթի ամենանշանավոր ծիսապաշտամունքային կառույցները susi կամ աշտարակաձև տաճարներն են: Այս կառույցներում իրականացվել են տարբեր տեսակի արարողություններ, իսկ Այանիսի susi տաճարի պեղումներն անգամ փաստում են տեղում անմար կրակի պաշտամունքի և դրա հետ կապված ծիսապաշտամունքային արարողությունների գոյության մասին: Չպետք է մոռանալ նաև Մուծածիրի նշանավոր տաճարը, որն Ուրարտուի հոգևոր կենտրոնը լինելուց բացի, ունեցել է նաև տարածաշրջանային սրբավայրի նշանակություն: Ուրարտուի գերագույն աստծուն ձոնված կառույցներից են նաև É-ն, É.BÁRA-ն, Iarani-ն և ᴱsirhani-ն: Ամենայն հավականությամբ, թե՛ susi-ները, և թե՛ թվարկված վերջին կառույցները ընդգրկված են եղել մեկ ծիսապաշտամունքային համալիրի մեջ:

Խալդիի քաղաքները: Ուրարտական արքաներն իրենց գերագույն աստծո պատվին քաղաքներ են կառուցել տերության տարբեր հատվածներում: Խալդիի քաղաքներ են եղել ներկայիս Քարահանի, Գյուզակի, Բաշկալեի, Մոլլա Բայազետի, Գավառի, Արծկեի, Քայսարանի տարածքներում: Բացի այդ՝ նման մի քաղաք էլ հիշատակվում է Միհերի Դռան արձանագրության տեքստում: Այն, ըստ Ե. Գրեկյանի, կարող է տեղայնացվել Աշոտակերտից ոչ հեռու: Վերը նշված

քաղաքներից առնվազն չորսը հիմնվել են Վանա լճի ավազանի արևելյան գոտում: Նման քաղաքների հիմնումը ևս կարևոր էր Խալդիի պաշտամունքի տարածման և հանրահռչակման համար:

Խալդիին վերաբերող ծիսապաշտամունքային արարողություններ: Այս ենթագլխում առանձնացրել ենք կենդանիների զոհաբերության, լյարդի, հեղման, կենաց ծառին առնչվող, թագադրության, «Սրբազան ամուսնության», կրակի հետ կապված, առյուծ և ցուլ սպանելու ծիսապաշտամունքային արարողությունները: Ամենայն հավանականությամբ, Ուրարտուում եղել է կենդանիների զոհաբերության երկու տեսակ, որոնք վկայված են ուրարտերեն nipsidu– զոհաբերել, և urpu-մաշկել-քերթել կամ ողջակիզել բայերով: Հետաքրքիր է, որ ուլ զոհաբերվել է միայն Խալդիին: Ուշագրավ են արքայի ժամանման հետ կապված լյարդի, երբեմն նաև սրտի և թոքի զոհաբերությունների հիշատակության փաստը, ինչը կարող է վկայել ուրարտական տաճարներում գուշակությունների ինստիտուտի գոյության մասին: Ուրարտական մի քանի կնիքներին պատկերված են կենաց ծառի և հեղման ծեսերի հետ կապված ծիսապաշտամունքային արարողությունների տեսարաններ: Նման ծեսեր ֆիքսվել են նաև հնագիտորեն և հատկապես փաստվում են Այանիսում իրականացված վերջին տարիների պեղումների արդյունքով: Թագադրության ծեսն անմիջականորեն առնչվում էր Խալդիի հետ, քանի որ հենց նա էր արքային մատուցում խույրն ու գայիսոնն Ուրարտուի: Այանիսի տաճարական համալիրի պեղումները փաստում են, որ այդ տարածքում եղել են կրակի հետ կապված ծիսապաշտամունքային արարողություններ: Դրանք փաստվում են տաճարին կից երկու օջախներով և տաճարական տարածքից գտնված բրոնզե առյուծգլուխ վահանի արձանագրությամբ, որտեղ հաղորդվում է կրակի վրա հող կամ ջուր լցնելու դեպքում Խալդիի կողմից պատիժների մասին: Մենք փորձ ենք արել վերականգնել նաև «Սրբազան ամուսնության» և առյուծ և ցուլ սպանելու ծեսերը, որոնց համար հիմք են ծառայել թե՛ ուրարտական, և թե՛ զուգահեռ ասորեստանյան սկզբնաղբյուրները:

ԳԼՈՒԽ II: ԽԱԼԴԻԻ ԿԵՐՊԱՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուրարտական պատկերագրության մեջ կոնկրետ աստվածության առանձնացումը բավական բարդ և վիճահարույց խնդիր է: Բանն այն է, որ ինչպես հնագիտական ու գրավոր սկզբնաղբյուրներում, այնպես էլ ուրարտական պատկերագրության մեջ առայժմ չկա որևէ վկայություն, որն ուղղակիորեն վերաբերեր կամ մատնանշեր կոնկրետ աստվածության: Վերը նշված խնդիրներն ավելի հասկանալի դարձնելու համար հարկ ենք համարում բերել հինմերձավորարևելյան աստվածների պատկերագրությանն ու ընկալմանն առնչվող որոշ տվյալներ: Այսպես. Շոշ քաղաքից գտնված բաբելոնյան կուդուրու կոթողի վրա պատկերված աստվածությունները կամ դրանց խորհրդանշանները հաստատված են նաև յուրաքանչյուրին վերաբերող սեպագիր

տեղեկատվությամբ, կամ՝ Արբելա քաղաքի հիմնի մի հատվածում տեղի Իշթար աստվածուհին ներկայացած է որպես առյուծին հեծած դիցուհի: Հիմնվելով այս տեղեկության վրա՝ դժվար չէ կռահել, որ Արբելայի բարձրաքանդակներից մեկում, առյուծի վրա կանգնած աստվածուհին հենց Իշթարն է: Ցավոք, ինչպես Խալդիին, այնպես էլ ուրարտական որևէ այլ աստվածությանը վերաբերող նման տեղեկություններ դեռևս մեզ հայտնի չեն:

Խալդիի պատկերմանը վերաբերող որոշակի արդյունք ստանալու համար, անհրաժեշտ է խնդիրը դիտարկել ուրարտական պատկերագրության զարգացման և ժամանակային հաջորդականության համատեքստում: Այս առումով ուրարտական պատկերագրության մեջ հանդիպող աստվածային սյուժեները մենք փորձել ենք դիտարկել ըստ ժամանակագրական փուլերի, այնուհետև, առանձնացրել ենք դրանցում հանդիպող տարբեր աստվածությունների պատկերագրման ձևերը:

Ուրարտական պատկերագրության մեջ հանդիպող աստվածությունների տիպաբանությունը: Այս ենթագլխում առանձնացրել ենք աստվածությունների պատկերման մի շարք տիպեր, ինչպիսիք են՝ ցուլի վրա կանգնած, արևի թևատարած սկավառակից ելնող աստվածություն, բոցերով կամ ճառագայթներով աստվածություններ, Անձավի վահանին դրվագված առաջին աստվածությունը, Կենաց ծառի հետ առնչվող աստվածություններ, առյուծի վրա կանգնած աստվածություններ և այլն:

Մեր կարծիքով, դրանցից ուշագրավը Անձավի վահանին դրվագված առաջին աստվածությունն է՝ ներկայացված վազքի մեջ գտնվող, ամբողջովին բոցերի մեջ, մի ձեռքին աղեղ, իսկ մյուսին՝ բոցեղեն նիզակ: Այս պատկերումը լավագույնս համապատասխանում է բազմաթիվ ուրարտական արձանագրություններում «Խալդին արշավեց, իր զենքին (GIŠšuri) հնազանդեցրեց այս կամ այն երկիրը» բանաձևին: Այանիսից գտնված 80 սանտիմետրանոց նիզակածայրի արձանագրությունից պարզ է դառնում, որ ուրարտացիները նիզակը կոչել են šuri: Այս և ատենախոսությունում բերված մի շարք այլ փաստարկներ մեզ թույլ են տալիս կիսելու այն կարծիքը, որ վերը նշված աստվածությունը Ուրարտուի գերագույն աստված Խալդին է: Ընդ որում, ըստ մեզ, վերջինիս կերպարը համապատասխանում է մեր կողմից արդեն նշած երրորդ տարածույթին, որտեղ Խալդին հանդես էր գալիս որպես ռազմիկ և տերության ռազմական հաջողությունների երաշխավոր: Ըստ մեր կարծիքի՝ առնվազն Մուծածիրի տարածքում ինչ-որ փուլում Խալդին ընկալվել է նաև ցուլի տեսքով: Այսպես, ասորեստանյան սկզնաղբյուրները վկայում են, որ Մուծածիրի Խալդի աստծո տաճարում եղել է պղնձից ձուլված ցուլի, ինչպես նաև՝ իր հորթուկին սնուցող կովի արձանախումբ: Իր հորթուկին սնուցող կովի տեսարան պատկերված է նաև Մուծածիրի տաճարի ճակատային հատվածի առջև: Հին Մերձավոր Արևելքում հաճախ կովը և սնուցվող հորթուկը եղել են աստվածուհու և թագաժառանգի կենդանական կերպարանավորումները: Այսպես,

նորասորեստանյան թագավորությունում նման սյուժեում կովը ասոցացվել է Իշթար-Մուլլիսսու աստվածուհու, իսկ հորթուկը՝ գահաժառանգի հետ: Նորասորեստանյան թագավորության հայր-մայր-որդի խորհրդանշական եռյակը կազմում էին արքան, թագուհին և գահաժառանգը: Նրանցից առաջին երկուսը համապատասխանաբար մարմնավորում էին Աշշուր աստծուն և Իշթար աստվածուհուն: Ըստ երևույթին, կրոնական նման ընկալումները խորթ չեն եղել նաև ուրարտական վերնախավի համար: Մուծածիրի տաճարական համալիրում իր հորթուկին սնուցող կովի արձանախումբը կարող էր լինել տեղի աստվածուհու և ուրարտական գահաժառանգի կենդանակերպ դրսևորումը: Եթե Բագբարթուի պաշտամունքը ունեցել է տեղական բնույթ, ապա, ամենայն հավանականությամբ, հենց վերջինիս էլ խորհրդանշել է կովի արձանը: Բագբարթուն պետք է ունենար գուշակության աստվածուհուն բնորոշ գործառույթներ: Այս առումով հետաքրքիր է, որ Մուծածիրից ոչ այդքան հեռու գտնվող Արբելա քաղաքի դիցուհի Իշթար-Մուլլիսսուն եղել է գուշակությունների հովանավոր աստվածուհի և մի շարք ասսուրական տեքստերում ներկայացվել թագաժառանգին սնուցող կովի տեսքով: Կարծում ենք վերը նշված զուգահեռները արտացոլում են Արբելա-Մուծածիր կրոնական փոխառնչությունները: Ինչ վերաբերում է Մուծածիրում կովի և հորթուկի հետ հիշատակված ցուլի պղնձաձույլ արձանին, ապա, այն կարող էր խորհրդանշել տեղի գերագույն աստծուն: Եթե այդ արձանների պատրաստման ժամանակ Մուծածիրի գերագույն աստվածը եղել է Խալդին, ապա հենց վերջինիս հետ էլ պետք է ասոցացվեր ցուլի պղնձաձույլ արձանը:

Կարելի է նշել, որ առնվազն Անձավի վահանի առաջին աստվածության պատկերումը թույլ է տալիս ենթադրելու, որ Ուրարտուի գերագույն աստվածը ընկալվել է նաև մարդակերպ: Վերջինիս խորհրդաշաններն են հանդիսացել նիզակը, կրակը կամ melammu-ն: Բացի այդ՝ Մուծածիրի տաճարական համիլիրում, առնվազն Իշպուինիի կառավարման շրջանում կամ դրանից քիչ ուշ, Խալդին ունեցել է նաև կենդանակերպ խորհրդանշան՝ ցուլի տեսքով: Ըստ երևույթին, նմանատիպ գործառույթ են ստանձնել նաև առյուծը և գիշատիչ թռչունը: Դա կարող են փաստել Անձավի վահանի և Դիարբեքիրի գոտու դրվագազարդ պատկերները, որոնցում մի դեպքում Խալդիին, կարծես թե, ուղեկցում են առյուծն ու արծիվը, իսկ մյուս դեպքում՝ աստվածությանը (մեր կարծիքով Խալդիին) ուղեկցող թռչունը կարծես նպաստում է «առյուծի որսին»: Ամենայն հավանականությամբ, որոշ դեպքերում վերջինս ընկալվել է նաև Կենաց ծառի և արևի թևատարած սկավառակի տեսքով: Բոլորովին չբացառելով Վանի թագավորության հովանավոր գերագույն աստծո պատկերմանը և խորհրդանշաններին վերաբերող այլ տեսակետների ևս հավանական լինելը, հարկ ենք համարում ընդգծել, որ միայն հետագա պեղումներն ու հետազոտություններն ի զորու են նոր և հիմնավոր փաստարկներ տալ այս բարդ խնդրի լուսաբանման համար:

ԳԼՈՒԽ III: ԹԵՅՇԵԲԱՅԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ, ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ

Վանի թագավորության դիցարանի երկրորդ գերագույն աստվածը Թեյշեբան էր: Ուրարտական սեպագիր արձանագրություններում վերջինս գրեթե միշտ վկայված է հիմներձավորարևելյան տարերքի աստվածներին բնորոշ ^{D}IM/^{D}IŠKUR, ^{D}U գաղափարագրերով: Միայն մի քանի դեպքում է, երբ այս աստվածությունը հանդես է գալիս իր անվամբ: Ի տարբերություն Խալդիի, Թեյշեբային վերաբերող տեղեկությունները խիստ սակավ են ու կցկտուր: Բիայնական տերության երկրորդ գլխավոր աստծո մասին հիմնականում, հիշատակվում է գերագույն եռյակին վերաբերող անեծքի բանաձևերում և արքաների ուղերձներում, ինչպես նաև՝ ուրարտական տարբեր աստվածություններին կենդանական զոհաբերություններ մատուցելու համատեքստերում:

Սույն գլխի ներածական մասում անդրադարձ է կատարվում Հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության ստեղծումից առաջ տարերքի աստվածների պաշտամունքին:

Թեյշեբայի պաշտամունքը և Ուրարտուն: Թեյշեբայի պաշտամունքը Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության տարիներին: Վանի թագավորության առաջին միապետներին վերաբերող սկզբնաղբյուրները որևէ տեղեկություն չեն պարունակում Թեյշեբայի վերաբերյալ: Ուրարտուի տարերքի աստծո մասին հիշատակությունները հանդես են գալիս Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության շրջանում, և գլխավորապես, վկայված են Միհերի Դռան արձանագրության տեքստում: Ընդ որում, այստեղ հաղորդվում է ոչ միայն Թեյշեբային, այլ նաև վերջինիս զորքերին և Էրիդիա քաղաքի դարպասին կենդանական զոհաբերություններ մատուցելու մասին: Միհերի Դռան արձանագրության տեքստում Խալդիից հետո հիշատակվելու հանգամանքը փաստում է այն մասին, որ առնվազն վերը նշված ուրարտական միապետների համատեղ գահակալման շրջանում Թեյշեբան երկրորդն էր ուրարտական դիցարանում: Մենք հակված ենք կարծելու, որ վերը հիշատակված Էրիդիա քաղաքը կարելի է նույնացնել խուռիական գերագույն աստված Թեշուբի կարևոր պաշտամունքային կենտրոններից մեկի՝ Իռռեդեի հետ: Այս ժամանակաշրջանում Վանի թագավորության տարերքի աստծուն վերաբերող կարևոր սկզբնաղբյուր է Վերին Անձավից գտնված բրոնզե վահանի պատկերագրությունը: Այստեղ Թեյշեբան պատկերված է ցատկի մեջ գտնվող առյուծի վրա կանգնած՝ յուրաքանչյուր ձեռքին զույգ երեքական կայծակնային խրձեր բռնած:

Թեյշեբայի պաշտամունքը Մենուայի կառավարման շրջանից մինչև ուրարտական տերության անկումը: Մենուա, Արգիշթի I և Սարդուրի II արքաների կառավարման ժամանակաշրջաններին վերաբերող սկզբնաղբյուրները շատ քիչ տեղեկություններ են պարունակում Թեյշեբայի

վերաբերյալ: Ըստ երևույթին, վերջինս երկրորդն էր Խալդիից հետո և տերության գերագույն աստված Խալդիի և արևի աստված Շիվինիի հետ շարունակում էր լինել դիցարանի գերագույն եռյակի ներկայացուցիչներից մեկը: Վանի թագավորության տարերքի աստծո պաշտամունքի բարձրացման միտումներ են նկատվում Սարդուրի II արքայի կառավարման շրջանից հետո: Այսպես, վերջինիս հաջորդ Ռուսա I-ը Վարագավանքի արձանագրությունում Թեյշեբային անվանում է իր «տերը»: Ըստ երևույթին, Սարդուրիի կրած ծանր պարտություններն Ասորեստանից, ինչպես նաև Ռուսա I-ի ժամանակաշրջանում ստեղծված ոչ կայուն իրավիճակը թուլացնում է Խալդիի պաշտամունքը, և մեծապես ազդում «ռազմիկ Խալդիի» կերպարի վրա: Պատահական չէ, որ Սարդուրի II-ից սկսած ուրարտական սեպագիր տեքստերում դադարում է հիշատակվել «Խալդին արշավեց, իր զենքին հնազանդեցրեց ...» բանաձևը: Ռուսա I–ը առաջին անգամ Սևանի հարավ-արևելյան ավազանում քաղաք է կառուցում Թեյշեբա աստծո պատվին: Հետաքրքիր տեղեկություն կա Ռուսայի որդի Արգիշթի II-ի Չելեբիբաղիի արձանագրության մի հատվածում, որտեղ նշվում է տարերքի աստծո զենքի մասին: Իտալացի նշանավոր ուրարտագետ Մ. Սալվինին այստեղ վերականգնում է ^{D}IM-nini ^{GIŠ}šuri ընթերցումը: Միանգամայն չբացառելով այդ տարբերակը՝ մենք հակված ենք այն կարծիքին, որ արձանագրության այդ հատվածում խոսքը կարող էր գնալ տարերքի աստծո մի զենքի կամ գուցե ատրիբուտի մասին, որն ունեցել է անձրևաբեր հատկություն: Այդպիսիք կարող էին լինել սակրը, գուրզը, կայծակնային խրձերը և այլն: Համենայն դեպս, արձանագրության այդ հատվածի համատեքստում հիշատակված «երբ ջրերը հոսեն» արտահայտությունը կարող է մատնանշել Թեյշեբայից անձրև հայցելը:

Ք. ա. VIII դ. վերջերից - Ք.ա. VII դ. ժամանակահատվածում Ուրարտուում նկատվում են հողի ցամաքեցման հետ կապված խնդիրներ: Պատահական չէ, որ հենց այդ ժամանակվա մի շարք արձանագրություններում (Չելեբիբաղի, Գյովելեք և այլն) ուրարտական միապետները անձրև և ջուր էին հայցում: Կարծում ենք, որ բնակլիմայական այս գործոնը ևս նպաստել է Թեյեշեբայի պաշտամունքի բարձրացմանը: Դատելով ուրարտական վերջին արքաների տեքստերից՝ Թեյշեբան շարունակում էր մնալ երկրորդը տերության դիցարանում և կազմել գերագույն եռյակի ինստիտուտի մի մասը:

Թեյշեբայի քաղաքները: Մեզ են հայտնի ուրարտական տերության տարերքի աստծուն ձոնված առնվազն երկու քաղաք: Դրանցից առաջինը կառուցվել է Ռուսա I-ի կողմից: Այժմ այն հայտնի է Օձաբերդ կամ Ծովինարի ամրոց անվամբ: Երկրորդը՝ Ռուսա II-ի կողմից կառուցված նշանավոր Թեյշեբաինին է, որը նաև հայտնի է Կարմիր բլուր անվամբ: Բացի վերը նշվածներից՝ տարերքի աստծո քաղաքի մասին հիշատակություն կա Այանիսի պեղումներից գտնված բուլլաներից մեկին՝ ^{D}IM-ni URU ^{m}nulagi ^{KUR}úriguhini- «Տարերքի աստծո քաղաքի. Ուրիգու երկրի «պարոն» Նուլագի»: Կարծում ենք, որ նման քաղաքների կառուցումը պայմանավորված է եղել Թեյշեբայի

պաշտամունքի բարձրացմամբ, ինչին նպաստել է Խալդիի պաշտամունքի թուլացումը և մեր կողմից արդեն նշած բնակլիմայական գործոնը: Ըստ երևույթին, նման քաղաքներ հիմնելով, ուրարտական միապետները անձրև և բարեբեր հող էին հայցում Թեյշեբայից:

Թեյշեբայի պատկերագրությունը և խորհրդանշանները: Մասնագիտական գրականության մեջ հաճախ ընդունված է Թեյշեբայի հետ նույնացնել ուրարտական պատկերագրության մեջ հանդիպող ցուլի վրա կանգնած աստվածությանը: Միանգամայն չբացառելով այդ տեսակետների հնարավոր լինելը՝ հարկ ենք համարում նշել, որ դեռևս կարելի է առանձնացնել Թեյշեբայի պատկերման երկու կերպար: Հիմնվելով Անձավի վահանի պատկերագրության վրա՝ կարելի է եզրակացնել, որ առնվազն Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալման շրջանում տարերքի աստվածը պատկերվել է որպես բաց երախով ցատկի մեջ գտնվող առյուծի վրա կանգնած մի աստվածություն՝ յուրաքանչյուր ձեռքին՝ զույգ երեքական կայծակնային խրձեր բռնած: Մյուսը՝ Կարմիր բլուրից գտնված հայտնի արձանիկն է, որը, ամենայն հավանականությամբ, հենց Թեյշեբան է: Այստեղ նա մի ձեռքով կացին, իսկ մյուսով գուրզ է բռնել: Չի բացառվում, որ Վանի թագավորության տարերքի աստվածը ներկայացված լինի նաև ուրարտական կնիքներից մեկի հորինվածքային տեսարանում, որտեղ պատկերված են իրար հաջորդող չորս աստվածություններ: Կարելի է կարծել, որ պատկերված երկրորդ աստվածությունը, ով կանգնած է առյուծի վրա և մի ձեռքին եռաժանի է պահում, հենց ուրարտական դիցարանի երկրորդ գերագույն աստվածն է: Թեյշեբայի պատկերագրությանը վերաբերող անդրադարձներից կարելի է եզրակացնել, որ վերջինս պատկերվել է մարդակերպ: Առնվազն Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանում նրա խորհրդանշաններն են համարվել կայծակնային խուրձը, իսկ այնուհետև՝ սակրը, գուրզը և զուցե նաև՝ եռաժանին: Վերոհիշյալ արքաների օրոք ուրարտական դիցարանի տարերքի աստծո կենդանական խորհրդանիշն է եղել առյուծը: Մենք չենք բացառում նաև այն կարծիքները, համաձայն որոնց, ցուլը ևս ընկալվել է որպես Թեյշեբայի խորհրդանիշ:

ᴰBABA: Սկզբնաղբյուրների սակավության պատճառով առայժմ դժվար է պարզել, թե որ աստվածուհին է հանդիսացել Թեյշեբայի կինը, կամ արդյո՞ք ուրարտացիների կրոնական պատկերացումներում տարերքի աստվածն ընդհանրապես ունեցել է կողակից: Այս առումով, Գ. Մելիքիշվիլին, համադրելով Միհերի Դռան արձանագրության մեջ երկրորդը հիշատակված տարերքի աստծուն և այսպես կոչված աստվածուհիների շարքում երկրորդը նշված աստվածությանը, եզրակացրել է, որ վերջինիս անունը պետք է ընթերցվի ᴰHuba ձևով: Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ Խուբայի անունը միանգամայն համադրելի էր Թեյշեբայի խուռիական զուգահեռ Թեշուբի կանանցից մեկը համարվող Խեբաթի անվան հետ: Հետևաբար, ուրարտական տարերքի աստծո անունը եղել է հենց Խուբա: Պետք է նշել, որ Միհերի Դռան արձանագրության մեջ, վերը հիշատակված

աստվածուհու անվան առաջին վանկը վնասված է և հնարավոր էին սեպագրի ընթերցման և՛ **ba-**,և՛ **<u>hu</u>-** վանկերը: Երկար ժամանակ, սակայն, Խուբայի՝ Թեյշեբայի կինը լինելու մասին տեսակետը թվում էր միանգամայն տրամաբանական և ընդունելի: Մինչդեռ, Այանիսում բացված տաճարի արձանագրությունից պարզ դարձավ, որ այդ աստվածուհու անվան ընթերցման ճիշտ տարբերակը ^{D}Baba-ն է: Ցավոք, մեզ հայտնի բոլոր արձանագրություններում, վերջինիս անունը հիշատակվում է միայն կենդանական զոհաբերություններ մատուցելու մասին հրամանի համատեքստում: Այս առումով դժվար է խոսել՝ արդյո՞ք այս աստվածուհին է եղել Թեյշեբայի կինը թե ոչ: Հետաքրքիր է, որ Միջագետքում հայտնի է Բաբա անվամբ աստվածուհի, որի մասին տեղեկությունները ավանդված են ամենավաղ շումերական տեքստերում: Այս աստվածուհին բաբելոնյան կուդդուրու կոթողներում ներկայացված է մի խորհրդանիշով, որը, կարծես, ցանցկեն թևերով հովհար է հիշեցնում :

Ուրարտերենում babani նշանակում է «լեռ, ժայռ»: Հնարավոր է, որ Բաբա աստվածուհու որոշ գործառույթներ կապված լինեին հենց լեռան կամ ժայռի հետ: Եթե ընդունենք այն հանգամանքը, որ Խալդին նաև ընկալվել է որպես ժայռից ելնող՝ մեռնող-հառնող աստվածություն, ապա չի բացառվում, որ ուրարտացիների առնվազն Ք.ա. IX-VII դդ. առասպելաբանական պատկերացումներում Բաբան ընկալվեր որպես Խալդիի մայր:

ԳԼՈՒԽ IV: ՇԻՎԻՆԻԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ, ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ

Ուրարտական պետության դիցարանի գերագույն եռյակը եզրափակում էր Շիվինին: Սեպագիր արձանագրություններում վերջինիս անունը, մեծամասամբ, վկայվածէ ^{D}UTU գաղափարագրով և միայն մի քանի դեպքում՝ վանկագրով՝ ^{D} Ši-ú-i-ni, ^{D} Ši-i-ú-i-ni: Ինչպես Թեյշեբայի դեպքում, ուրարտական դիցարանի արևի աստծուն վերաբերող սկզնաղբյուրները ևս սակավ են և աղքատիկ: Շիվինին ներկայացված է ուրարտական սեպագրերի անեծքի բանաձևերում հիշատակող աստվածային գերագույն եռյակի մեջ, Վանի տիրակալների ուղերձներում, ինչպես նաև՝ Ուրարտուի աստվածություններին կենդանական զոհաբերություններ մատուցելու մասին տեքստերում:

Շիվինիի պաշտամունքն Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության տարիներին: Հատկապես Մհերի Դռան արձանագրության տեքստը վկայում է, որ վերը նշված միապետների գահակալության շրջանում արդեն Շիվինին համարվել է տերության դիցարանի երրորդ գերագույն աստվածը: Արձանագրությունում հաղորդվում է նաև Արևի աստծո, ինչպես նաև Ուիշինի քաղաքի արևի աստծո դարպասի մասին: Ըստ երևույթին, Շիվինիի ամիսը համապատասխանել է հայկական տոմարի Արեգ ամսին և համընկել մարտ-ապրիլ ժամանակահատվածի հետ: Ինչ վերաբերում է Ուիշինիին, ապա, ամենայն հավանականությամբ, այս քաղաքը պետք է տեղակայված լիներ Վան և

Ուրմիա լճերի միջնակայքում: Տեսակետներից մեկի համաձայն, ուրարտական արևի աստծո հետ են առնչվում նաև Միհրի Դռան տեքստում հիշատակված Արտուարասիները: Դրանք վկայված են Խալդիի և տարերքի աստծո զորքերից հետո: Ռուսա I-ի Մահմուդաբադի արձանագրությունում, սակայն, Արտուարասիները կարծես թե հիշվում են որպես առանձին աստվածություններ: Իշպուինիի և Մենուայի ժամանակաշրջանին վերաբերող կարևոր սկզբնաղբյուր է նաև Վերին Անձավից գտնված վահանն՝ իր պատկերագրությամբ: Հաջորդելով Խալդիին և Թեյշեբային, ըստ երևույթին, վահանի դրվագաշարի այդ հատվածում որպես արևի թևատարած սկավառակի շրջանակի միջից դուրս եկող, ցուլի վրա կանգնած մի աստվածություն, պատկերված է Շիվինին:

Շիվինիի պաշտամունքը Ք. ա IX դարի վերջին տասնամյակից մինչև ուրարտական պետության անկումը: Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանից հետո թվագրվող սկզբնաղբյուրները խիստ սակավ են և աղոտ տեղեկություններ են պարունակում Ուրարտուի դիցարանի արևի աստծո մասին: Հիմնականում, վերջինս հանդես է գալիս Վանի թագավորության արքաների կողմից գերագույն եռյակին հղված ուղերձների տեքստերում, անեծքի բանաձևերում, ինչպես նաև՝ ուրարտական դիցարանի աստվածություններին կենդանական զոհեր մատուցելու հանձնարարականներում: Ուշագրավ է ուրարտական մի շարք արձանագրությունների անեծքի բանաձևերում կրկնվող հետևյալ հատվածը. «**Ո՛վ այս արձանագրությունը ոչնչացնի, ո՛վ ջարդի այն, թո՛ղ Խալդին, Թեյշեբան, Շիվինին և (բիայնական մյուս աստվածները) ոչնչացնեն սերմը նրա արևի տակ»:** Նշվածից կարելի է եզրակացնել, որ, ըստ երևույթին, և՛ արևը, և՛ արևի աստվածը, ընկալվել են նաև որպես լույսի և արդարության աստվածություն: Չի բացառվում, որ Շիվինին ունեցած լինի նաև ամենատես աստծո գործառույթներ: Վերջինիս են ձոնվել նաև pulusi կոթողներ, ինչի մասին վկայված է Իշպուինիի, Մենուայի և Ինուշպուայի անունը պարունակող Քարահանի արձանագրությունում: Թանահատի արձանագրության մի հատվածում հիշատակված է «Արևի աստծո զորքերի» մասին: Դատելով արձանագրության ռազմական բնույթ ունեցող համատեքստից՝ մեզ թվում է, որ այստեղ խոսքը գնում է Շիվինիի անունը կրող ռազմական միավորման մասին: Հին Մերձավոր Արևելքում կային տարբեր նման միավորներ, որոնք կրում էին այս կամ այն աստվածության անունը:

Ուրարտական դիցարանի երրորդ գերագույն աստծո որոշ գործառույթների մասին հետաքրքիր տեղեկություն է վկայված Արծկեից գտնված արձանագրության անեծքի բանաձևում, ուր, ըստ Մ. Սալվինիի, արձանագրված է. «թո՛ղ արևի աստվածն այրի» արտահայտությունը: Այս կարևոր հաղորդումը թույլ է տալիս ենթադրելու, որ Շիվինին հանդիսացել է նաև տիեզերական կարգը պահպանող, և այն խախտողներին իր կիզիչ ճառագայթներով պատժող ամենատես աստվածություն:

Ռուսա II-ի և Ռուսա Էրիմենայորդու տեքստերում, որոնցում նաև հաղորդվում է ուրարտական տարբեր աստվածություններին կենդանական զոհեր մատուցելու մասին, Շիվինին հիշատակվում է Խալդիից և Թեյշեբայից հետո: Այսինքն, ուրարտական արևի աստվածը շարունակում էր մնալ պետության դիցարանի գերագույն եռյակի կազմում և կարևոր տեղ զբաղեցնել Վանի թագավորության վերնախավի, ինչպես նաև՝ բնակչության կրոնական ընկալումներում:

Շիվինիի պատկերագրությունն ու խորհրդանշանները: Հիմնվելով Անձավի վահանի պատկերագրության վրա՝ կարելի է ենթադրել, որ առնվազն Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարման շրջանում, իսկ գուցե ավելի վաղ, Շիվինին պատկերվել է որպես ցուլի վրա կանգնած, արևի թևատարած սկավառակից դուրս եկող, մարդակերպ աստվածություն: Ավելի ուշ, ուրարտական արևի աստվածը պատկերվել է նաև թևավոր ձիու վրա կանգնած: Չպետք է բացառել նաև այն տեսակետները, ըստ որոնց, ուրարտական արևի աստվածը պատկերվել է նաև որպես փարթամ վարսերով, ծնկած պատանի, ով գլխավերևում ձեռքերով պահում է արևի թևավոր սկավառակը: Վերը նշվածից ելնելով՝ կարելի է կարծել, որ ուրարտական դիցարանի արևի աստծո կենդանակերպ խորհրդանշաններից են համարվել ցուլը և ձին՝ իր թևավոր տարբերակով: Բացի այդ, ամենայն հավանականությամբ, որպես Շիվինիի խորհրդանշաններ են ընկալվել արևի թևատարած կամ թևավոր սկավառակը, հավասարաթև խաչը, գուցե նաև՝ Այանիսի թիթեղին դրվագված «արևային» պատկերը:

Ըստ երևույթին, ուրարտական դիցարանի արևի աստծո անունը ներկայացված է եղել նաև հիերոգլիֆային նշաններով, ինչպիսիք են թևավոր ձին, արևի թևավոր սկավառակը, մեջտեղում փոսորակով շրջանակը, ինչպես նաև լայն բացված մատներով ձեռքերի դաստակների և դրանց վերնամասում տեղադրված ձվածիր շրջագծի փորագիր նշանագրերը:

Տուշպեա-Տուշպունիա: Այս ենթագլխում քննարկվում է Շիվինիի և մի շարք հետազոտողների կողմից որպես նրա կողակից ընդունվող Տուշպուեա/Տուշպունիայի հարաբերակցության խնդիրը: Պետք է նշել, որ դեռևս չկա այդ «միությունը» հաստատող որևէ ուղղակի սկզբնաղբյուր: Եթե Մհերի Դռան արձանագրության այսպես կոչված աստվածուհիների ցուցակում Տուշպուեան երրորդն է, ապա Այանիսի տաճարի արձանագրությունում Տուշպունիայի անունը հիշատակվում է Խալդիին, Թեյշեբային, Շիվինիին, Ուարուբանիին, Խուտուինիին, Լուսնի աստծուն, Խալդյան զենքերին, Խալդյան դարպասին, Էիդուրուին, Բաբային, Ադիային, Սարդիին, Ինուանիին, Աիային կենդանական զոհաբերություններ իրականացնելու հրահանգներից հետո: Իդեպ, ըստ Ի. Դյակոնովի, Շիվինիի կինը կարող էին եղած լինել Աիա կամ Աուի աստվածուհիները: Նշանավոր գիտնականը իր տեսակետը հիմնավորում է այն հանգամանքով, որ Միջագետքում հաճախ հենց Այա անունն ունեցող աստվածուհին է հանդիսացել արևի աստծո կինը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերագույն եռյակ: Ակնհայտ է, որ կրոնական այս ինստիտուտը գոյություն է ունեցել առնվազն Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալման շրջանից և շարունակվել մինչև ուրարտական տերության անկումը: Դժվար է կարծել, որ Իշպուինիի նախնական դիցարանում եղել է գերագույն եռյակը ներկայացնող աստվածությունների հաջորդակարգը: Մեզ ավելի հավանական է թվում, որ Խալդի-Թեյշեբա-Շիվինի եռյակն Ուրարտու է ներկրվել միտումնավոր՝ որոշակի կրոնաքաղաքական զարգացումների արդյունքում: Այս առումով, չպետք է բացառել Գ. Ղափանցյանի կողմից առաջ քաշված այն տեսակետի հավանականությունը, ըստ որի, Խալդին, թերևս նաև Թեյշեբան և Շիվինին սկզբնապես տարածաշրջանի առանձին ցեղերի տեղայնական աստվածություններ են եղել:

Խալդի: Դեռևս դժվար է միանշանակորեն խոսել Խալդիի պաշտամունքի նախնական տարածքի մասին: Ըստ երևույթին, այս աստծո պաշտամունքն Ուրարտուում ներդրվել է Իշպուինի արքայի կողմից: Վերջինիս և նրա որդի Մենուայի համատեղ կառավարման շրջանում կարելի է առանձնացնել մեր կողմից նշված Խալդիի կերպարներն արտացոլող երեք տարածույթներ: Ուրարտուի գերագույն աստծուն ձոնված են եղել թե՛ բացօթյա, և թե՛ տաճարական բնույթի կառույցներ: Խալդիի պաշտամունքն առնչվել է կենդանիներ զոհաբերելու, հեղման, կրակի հետ կապված, «Սրբազան ամուսնության», թագադրության և այլ ծեսերի հետ: Ինչպես նշել ենք, մենք հակված ենք կարծելու, որ դեռևս կա Խալդիին այս կամ այն կերպ ուղղակիորեն վերաբերող երկու պատկերում՝ Անձավի վահանին դրվագված առաջին աստվածությունը, և կենդանակերպ՝ Մուծաձիրի տաճարում՝ ցուլի տեսքով: Խալդիի խորհրդանշաններից են եղել ցուլը, կրակը, Կենաց ծառը, նիզակը և այլն: Ինչ վերաբերում է Խալդիի և նրա կանանց հարաբերակցության խնդրին, ապա միանգամայն չբացառելով այն տեսակետները, ըստ որոնց, Ուարուբանին եղել է Խալդիի կինը, մենք հակված չենք այդ աստվածուհուն նույնացնելու Բագբարթուի հետ: Ըստ մեզ, Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանում Ուրարտուի գերագույն աստծո հետ «ամուսնացվել» է Պուլուադի երկրի աստվածուհին:

Թեյշեբա: Այս աստծուն վերաբերող առաջին սկզբնաղբյուրները վերաբերում են Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալման շրջանին: Այդ ժամանակաշրջանից մինչև ուրարտական տերության անկումը Թեյշեբան եղել է դիցարանի գերագույն երկրորդ աստվածը: Սակայն, Թեյշեբայի պաշտամունքի ուժեղացում է նկատվում հատկապես Սարդուրի II-ի ծանր պարտություններից հետո: Մեր կարծիքով, ուրարտական տարերքի աստծո պաշտամունքի բարձրացումը գլխավորապես կապված է եղել Ք. ա. VIII դ. վերջին և Ք. ա. VII դարում Ուրարտուում պարբերաբար տեղի ունեցող բնակլիմայական աղետների (ջրային ավազանների ցամաքում, երկրաշարժեր) հետ: Այդ մասին են վկայում

Թեյշեբային ձոնված քաղաքների կառուցման, ինչպես նաև Չելեբիբաղիի արձանագրության մեջ տարերքի աստծո զենքի մասին հիշատակության փաստերը: Ինչ վերաբերում է այս աստծո խորհրդանշաններին՝ կարելի է փաստել, որ այդպիսիք են կայծակնային խրձերը, սակրը կամ կացինը, գուրզը և թերևս՝ եռաժանին: Ինչ վերաբերում է Թեյշեբայի կողակցի խնդրին, ապա Այանիսի տաճարի արձանագրությունում DBaba ընթերցման ձևը խիստ կասկածի տակ դրեց Գ. Մելիքիշվիլու՝ Միհերի Դռան արձանագրության այսպես կոչված աստվածուհիների շարքում երկրորդը հիշատակված դիցուհուն Թեյշեբայի հետ «ամուսնացնելու» վարկածը:

Շիվինի: Ամենայն հավանականությամբ, Շիվինիի պաշտամունքը առաջնային դիրքեր է ունեցել Վանա լճից հյուսիս և արևելք ընկած տարածքներում: Ըստ երևույթին, այդ տարածաշրջան ուրարտացիների ներթափանցմամբ, Շիվինիի պաշտամունքային մի շարք կարևոր գործառույթներ սինկրետացվել են Խալդիին: Շիվինիի անունով է կոչվել ուրարտական տոմարի գլխավոր ամիսը, որը համադրելի է տարվա մարտ-ապրիլ ժամանակահատվածին, երբ տոնվում էր Նոր տարին: Մահմուդաբադի արձանագրության համատեքստը թույլ է տալիս ենթադրել, որ Արտուարասիները եղել են առանձին աստվածություններ: Այս առումով, պետք է նշել, որ Թանահատի արձանագրությունում ուղղակի վկայություն կա «արևի աստծո զորքերի» վերաբերյալ: Ինչպես նշել ենք, մենք հակված ենք կարծելու, որ այստեղ խոսքը գնում է Շիվինիի անունը կրող ինչ-որ ռազմական միավորի մասին: Ըստ երևույթին, Շիվինին հանդիսացել է ոչ միայն արևի, այլև լույսի և արդարադատության, տիեզերական կարգը վերահսկող և այն խախտողներին անողոքաբար պատժող աստվածություն:

Առնվազն Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարման շրջանում, իսկ գուցե ավելի վաղ, Շիվինին պատկերվել է որպես ցուլի վրա կանգնած, արևի թևատարած սկավառակից դուրս եկող, մարդակերպ աստվածություն: Ավելի ուշ, ուրարտական արևի աստվածը պատկերվել է նաև թևավոր ձիու վրա կանգնած: Չպետք է բացառել նաև այն տեսակետները, ըստ որոնց, ուրարտական արևի աստվածը պատկերվել է նաև որպես փարթամ վարսերով, ծնկած պատանի, ով գլխավերևում ձեռքերով պահում է արևի թևավոր սկավառակը: Կարելի է կարծել, որ ուրարտական դիցարանի արևի աստծո խորհրդանշաններից են համարվել ցուլը և ձին՝ իր թևավոր տարբերակով, արևի թևատարած կամ թևավոր սկավառակը և հավասարաթև խաչը: Ըստ երևույթին, ինչպես նշել ենք, ուրարտական դիցարանի արևի աստծո անունը ներկայացված է եղել նաև հիերոգլիֆային նշաններով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1) Բադալյան Մ. 2009: Տարին և Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը, Մերձավոր Արևելք, Երևան, էջ 36-42:

2) Բադալյան Մ. 2011: Խալդի: Ուրարտուում միաստվածության զարգացման վերականգնման փորձ, Մերձավոր Արևելք, VII, Երևան, էջ, 80-88:

3) Բադալյան Մ. 2012ա: Ուարուբանիի և Բագբարթուի հարաբերակցության շուրջ, Մերձավոր Արևելք, VIII, Երևան, էջ, 23-39:

4) Բադալյան Մ. 2013ա: Ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռները (խորշեր), ՎԱՆ I, Հայաստանի մայրաքաղաքները. Գիրք I, Վան, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբեր 2010թ.) նյութերի ժողովածու, էջ, 82-94:

5) Բադալյան Մ. 2013բ: Էրեբունու Susi տաճարի որոշ խնդիրների շուրջ, «Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրները», Միջազգային գիտաժողովի նյութեր, Սեպտեմբեր 25-սեպտեմբեր 27, «Լեգալ Պլյուս» հրատարակչություն , Երևան, էջ, 8-9 :

6) Բադալյան Մ. 2014ա.: «Խալդի և Բագբարթու»: Ուրարտուում «Սրբազան ամուսնության» ծեսի գոյության խնդրի շուրջ, «Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը» ժողովածու, Երևան, 2014, «Դանիելյան Պրինտ» տպագրատուն, էջ, 145-160:

7) Բադալյան Մ. 2014բ.: Կրակի պաշտամունքն ու պատկերագրությունը Վանի թագավորությունում, Հին Արևելք I (VI), Երևան, էջ, 10-35:

8) Բադալյան Մ. 2015: Շիվինիի պաշտամունքը, պատկերագրությունը և խորհրդանշանները, Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն, հոդվածների ժողովածու, Երևան, տպագրվել է անհատ ձեռներեց «Վարդան Մկրտչյան» տպագրատանը, էջ, 162-186:

9) Badalyan M. 2015: The Urartian Weather God Teišeba (Based on Archaeological and Philological Data), AJNES, IX/1, 125-142.

MIKHAIL S. BADALYAN

THE SUPREME TRIAD OF THE URARTIAN PANTHEON (CULT, SYMBOLS, ICONOCRAPHY) ON THE BASIS OF ARCHAEOLOGICAL SOURCES

SUMMARY

Based on archaeological data, as well as philological and visual art sources, the present dissertation focuses on the cult, symbols and iconography of the Urartian pantheon's supreme triad with the main purpose to reconstruct the chronological sequence of the studied objects.

In the Introduction the significance, methodology, issues and purposes, as well as the review of the related literature are represented.

CHAPTER I: The Cult of Haldi

The first part of this chapter focuses on the origin of Haldi's cult before the formation of the Urartian State. The worship of Haldi as an axis of state and royal ideology was introduced by the King Ishpuini and was developed by his successors. We point out three cultic-geographical areas related to the image of the Urartian supreme

god during the co-regency of Ishpuini and his son Menua: 1) Musasir and its neighboring territory, where the cult of Haldi was associated mainly with the royal family, 2) Eastern and north-eastern shore of Lake Van, where Haldi was considered as savior and guarantor of the region's benevolence, 3) Conquered lands, where, being the guarantor of the Urartian military success, Haldi was assosiated with the image of a warrior with his mighty spear. During the reign of Kings Menua, Argishti I and Sarduri II the cult of Haldi became more and more popular. But the defeat of Sarduri II by the Assyrian army, and unstable situatuon influnced the worship of the Urartian main god. We tend to think that in this respect climatic factors also played essential role. On this background the cult of the Urartian second high-ranked god Teisheba increased. In all likelihood, the worship of Haldi disappeared with the collapse of the Urartian State.

CHAPTER II: The Study of the Image and Symbols of Haldi in the Context of Urartian Iconography

In this chapter we single out the typology of deites represented in the Urartian iconography. We tend to think that we need to have direct sources to be able to associate any deity with a certain image. In this regard, we also share the opinion that the first deity depicted on the Andzav shield is the god Haldi. Here, he is imaged in a running posture, in flames, holding a burning spear in one hand and a bow in the other. In our opinion the fire, the winged solar disc, the tree of life, the eagle, the lion, the bull and the spear were the symbols of the Urartian State god.

CHAPTER III: The Cult, Iconography and Symbols of Teisheba

The first data towards Teisheba are related to the co-regency of Ishpuini and Menua and are attested especially in Mheri door inscription. Throughout the whole span of existence of the Urartian Empire the weather god was the second worshipped god in the state pantheon. But, as we have already mentioned, because of the defeat of Sarduri II, the worship of Teisheba significantly increased. We tend to think that climatic crisis also played a certain role. In this context the fact of foundation of cities devoted to Teisheba is remarkable. In our opinion, in such a way the Urartian monarches called to the god of weather asking rain and fertility. In our dissertation we suppose that the image of the second god depicted on the Andzav shield and the statue of bearded god with a hammer and a mace found from Karmir blur can be assosiated with Teisheba. In all likelihood, the axe, the hummer, the thunderbolts and maybe the trident, were the symbols of the Urartian weather god.

CHAPER IV: The Cult, Iconography and Symbols of Šiuini

At least since the co-regency of Ishpuini and Menua till the fall of Urartu Šiuini was the third high-ranked god in the pantheon. The month dedicated to the Urartian sungod coincides to March-April. It had an important role in the Urartian religious ceremonies. Probably, Šiuini was depicted as a god in a winged solar disc, standing on a bull, later standing on a winged horse. The horse, the Maltese Cross and the solar star depicted on a plaque from Ayanis perhaps can reflect his symbols.

The results of our study can open new perspectives for understanding some complicated aspects related to the archaeology of the Urartian religion. It is important that many parts of our research are based on the general studies of the Ancient Near Eastern archaeology, religion and art.

БАДАЛЯН МИХАИЛ СУРЕНОВИЧ

ВЕРХОВНАЯ ТРИАДА УРАРТСКОГО ПАНТЕОНА (КУЛЬТ, СИМВОЛЫ, ИКОНОГРАФИЯ) НА ОСНОВЕ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИСТОЧНИКОВ

РЕЗЮМЕ

В данной диссертации исследуются проблемы культа, иконографии и символики верховной триады урартского пантеона по археологическим и письменным источникам. Многие аспекты темы рассматриваются в контексте археологии, религии и искусства Древнего Ближнего Востока. В основу работы положен хронологический принцип. В Введении представлены актуальность, научная новизна, методы, основные проблемы и цель работы, а также обзор научной литературы.

ГЛАВА I: Культ Халди

В первой части I главы обсуждается проблема возникновения культа Халди в период, предшествующий формированию самого Урартского государства. Культ Халди был введен царем Ишпуини в качестве основного ядра урартской государственной и царской идеологии и особенно усилился во время его совместного правления с сыном Менуа. Нами выделены три основные культово-географических зоны, связанные с особым почитанием Халди: 1) Муцацир и прилегающие территории, где культ и образ Халди отражали царскую идеологию, 2) Восточное и северо-восточное побережья озера Ван, где Халди воспринимался как спаситель и гарант благополучия региона, 3) Захваченные территории, где будучи гарантом военного успеха урартского царства, Халди воспринимался в образе воина с непобедимым копьем.

В период правления царей Менуа, Аргишти I и Сардури II культ урартского верховного бога еще более укрепился и получил наибольшее распространение. Однако в результате военных неудач Сардури II и нестабильности, в стране стал возрастать культ бога стихии Тейшебы. По нашему мнению, в усилении культа Тейшебы значительную роль сыграл также климатический фактор. Тем не менее, культ Халди занимал первенствующее положение и исчез лишь с распадом царства.

ГЛАВА II: Исследование образа и символов Халди в контексте урартской иконографии.

В данной главе нами выделены типы изображения божеств в урартской иконографии. Для выделения иконографии того или иного божества необходим сравнительный анализ с изображениями остальных божеств, встречающихся в урартском изобразительном искусстве.

Выражая согласие с мнением большинства ученых о том, что изображение первой фигуры представленной в ряду божеств на андзавском щите, как изображение Халди, мы склонны считать его одним из иконографических типов Халди. На вышеупомянутом щите он представлен бегущим воином в языках пламени, держащим лук в одной руке и огненное копье в другой. Огонь, крылатый диск, древо жизни, орел, лев и копье, вероятно, являлись атрибутами и символами урартского верховного божества.

ГЛАВА III: Культ, иконография и символы Тейшебы

Первые данные о Тейшебе относятся к периоду совместного правления Ишпуини и Менуа и засвидетельствованы главным образом в надписи "Мхери Дур". На всем протяжении существования Урарту Тейшеба был вторым по значению в верховной триаде пантеона. Однако в результате военных поражений Сардури II и нестабильного положения внутри государства культ Тейшебы начал возвышаться. В этом определенную роль сыграли также климатические факторы. К вышеупомянутым факторам следует отнести также строительство городов, посвященных Тейшебе (Одзаберд, Кармир блур). Строительством городов в честь Тейшебы урартские монархи взывали к богу стихии, выпрашивая дождь и плодородную землю.

На андзавском щите к образу Тейшебы непосредственно относится фигура второго по счету божества. Бога Тейшебу изображает также статуэтка бога с топором и булавой в руках, найденная в Кармир блуре. По всей вероятности, топор, булава, волнистые молнии, возможно и трезубец, являлись его символами.

ГЛАВА IV: Культ, иконография и символы Шивини

Со времен совместного правления Ишпуини и Менуа вплоть до распада государства, Шивини являлся третьим верховным божеством урартсткого пантеона. Месяц, посвященный урартскому богу солнца, соответствовал временному отрезку с марта по апрель. Он имел особое значение в системе урартских религиозных обрядов и ритуалов. По всей вероятности, Шивини изображался в виде стоящего на быке божества в крылатом солнечном диске. Позднее он изображался стоящим на крылатом коне. Его символами были конь, крылатый солнечный диск, крест типа "мальтийского" и лучезарная звезда, изображенная на одной из пластин из Аяниса.

Результаты данного исследования помогут пролить свет на некоторые сложные вопросы, касающиеся археологии и религии Урарту.